

## ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ

Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության  
ամբիոնի հայցորդ

### ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԵՐԻ ԴԱՍՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մինչ այժմ արված եզրակացություններին համապատասխան փորձենք տեսականորեն իմաստավորել իրավունքի կիրառման տեսակների և ձևերի հիմնախնդիրը:

Իրավունքի կիրառման կամ իրավակիրառման տեսակների և ձևերի վերաբերյալ գաղափարներն առաջ են քաշվել դեռևս խորհրդային իրավունքի տեսության մեջ: Սակայն իրավակիրառման՝ որպես իրավունքի իրականացման հատուկ ձևի տեսակների վերաբերյալ խորհրդային իրավունքի տեսության մշակումները այսօրվա իրողություններին հետ համեմատած, հնացած մոտեցումներ են, քանի որ դրանք կառուցված են խորհրդային պետախիշտական համակարգի վրա, որը չէր ընդունում իշխանությունների բաժանման տեսությունը և սկզբունքը: Նշանակում է՝ հիմնախնդիրը կարիք ունի լրացուցիչ հետազոտության՝ պետաիրավական արդի իրողությունների, պետականագիտության ու իրավունքի տեսության զարգացման արդի մակարդակի դիրքերից: Այդ հետազոտական խնդրի լուծման համար նախ փորձենք վեր հանել իրավունքի արդի տեսության մեջ առկա մոտեցումներն իրավակիրառ գործունեության տեսակների և ձևերի վերաբերյալ, այնուհետև համադրել դրանք պետականագիտության վերջին նվաճումների հետ և հանգել գիտականորեն ճշգրիտ եզրակացությունների:

Տեսաբանների տեսակետներն իրավակիրառ գործունեության տեսակների և ձևերի հարցում կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբի տեսաբաններն իրավունքի կիրառումը՝ որպես իրավունքի իրականացման ձև, բաժանում են երկու ձևերի՝ օպերատիվ-գործադիր և իրավապահպան իրավակիրառում: Օպերատիվ-գործադիր իրավակիրառումը «իրավական նորմերի կարգադրագրերի կատարման կազմակերպումն է՝ դրական կարգավորումն անհատական իրավական ակտերի մի-

ջոցով: Ընդ որում, այս դեպքում կիրառվում է նորմի այն դիսպոզիցիան, որն ունի ոչ թե արգելող, այլ դրական բովանդակություն»: Իրավակիրառման իրավապահպան ձևն ուղղված է «իրավունքի նորմերը ցանկացած խախտումից պահպանելուն, պետական հարկադրանքն իրավախախտների նկատմամբ կիրառելուն, նշանակված պատասխանատվության միջոցների կատարման ապահովմանը»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, այս երկու ձևերի առանձնացման չափանիշը կարգավորիչ նորմի բնույթն է համապատասխանաբար կարգավորվող վարքագծի բնույթն է՝ դրական, թե բացասական (իրավախախտում): Այս չափանիշով իրավունքի կիրառումը երկու տեսակի է բաժանում մաս Վ. Ն. Պրոտասովը, միակ տարբերությամբ, որ նա դրանք անվանում է իրավակիրառման դրական և յուրիսդիկցիոն տեսակներ<sup>2</sup>: Ըստ նրա՝ «դրական իրավակիրառումը տեղի ունի միշտ, սակայն ոչ բոլոր նորմերի վերաբերմամբ, իսկ յուրիսդիկցիոն իրավակիրառումը կարող է վերաբերել ցանկացած նորմի, սակայն միայն դրա խախտման դեպքում»:

Հեղինակների երկրորդ խումբն իրավակիրառման մեջ առանձնացնում է երեք ձև՝

- 1) օպերատիվ-գործադիր իրավակիրառում,
- 2) իրավապահպան իրավակիրառում,
- 3) արդարադատություն (դատական իրավակիրառում)<sup>3</sup>:

Այս բաժանման կողմնակիցների դասակարգման չափանիշը և մոտեցման մեթոդաբանական հիմքերը սկզբունքորեն համընկնում են իրավակիրառման երկձև բաժանման կողմնակիցների հետ, միակ տարբերությամբ, որ եռաձև դասակարգման կողմնակիցներն իրավակիրառման իրավապահպան ձևից իր հերթին առանձնացնում են արդարադատությունը (դատական իրավակիրառումը)՝ հիմք ընդունելով դրա առանձնահատկությունները՝ իրականացնող հատուկ սուբյեկտ՝ դա-

տարան, և իրավակիրառման հատուկ ձև՝ դատավարական:

Ինչպես տեսնում ենք, այսպիսի դասակարգման մեջ կա դասակարգման չափանիշների շիլաշփոթ: Իրավակիրառումը գործադիր-օպերատիվ և իրավապահական ձևերի դասակարգման հիմքում դրվում են իրավունքի իրավաբանական գործառույթները և համապատասխանաբար իրավունքի նորմերի տեսակները՝ կարգավորիչ և իրավապահական իրավական նորմեր: Սակայն երրորդ տեսակի առանձնացման չափանիշը համարվում է իրավակիրառման սուբյեկտը և իրավակիրառման դատավարական ձևը: Այսպիսի դասակարգումը մեթոդաբանական տեսանկյունից սխալ է, որովհետև միևնույն դասակարգման ընթացքում որոշ ձևերի առանձնացման չափանիշը փոխվում է: Հետևաբար, այդ դասակարգումն անընդունելի է:

Այսպիսով իրավակիրառումը ձևերի դասակարգելու չափանիշ պետք է համարել իրավունքի նորմի տեսակը՝ ըստ իրավունքի իրավաբանական գործառույթների և դրան համապատասխան առանձնացնել իրավակիրառման երկու ձև՝ օպերատիվ-գործադիր (դրական) և իրավապահական (յուրիստիկցիոն):

Իրավակիրառման ձևերի դասակարգման այս չափանիշի հետ միասին գրականության մեջ առաջ են քաշում նաև իրավակիրառման դասակարգման այլ չափանիշներ՝ ըստ իրավունքի ճյուղերի, իրավունքի նյութական և վարույթային նորմերի կիրառում՝ ըստ իրավակիրառում իրականացնող մարմինների<sup>4</sup>: Այս չափանիշներով դասակարգումները չենք դարձնի առանձին քննարկման առարկա, քանի որ դրանք պարզաբանված են գրականության մեջ, որտեղ, սակայն, երբեմն հանդիպում են առանց հստակ չափանիշների դասակարգումներ: Դրանց օրինակներից է իրավակիրառման իրավապահական ձևի բաժանումը՝

- ա) վերահսկիչ-հսկիչ գործունեություն,
- բ) իրավաապահովող գործունեություն

(իրավունքի նորմերի կատարումն ապահովող գործունեություն),

- գ) իրավական վեճերի լուծման և իրավախախտումների վերաբերյալ գործերի քննություն,
- դ) պետական հարկադրանքի կատարման գործունեություն<sup>5</sup>:

Այս դասակարգման մեջ հեղինակը նույնիսկ առաջ չի քաշել դասակարգման չափանիշը, այլ կատարել է հասարակ թվարկում:

Իրավակիրառական գործունեությունը, բացի ձևերի դասակարգելուց գրականության մեջ կա դրա բաժանումը տիպերի՝ էլեմելով իրավակիրառումն իրականացնող սուբյեկտից, իրավակիրառման ձևերից և նպատակներից<sup>6</sup>: Անշուշտ, նման դասակարգումն ունի ռացիոնալ հատիկներ, սակայն, եթե նկատում ենք, դասակարգման մեկ չափանիշում դրված է երեք չափորոշիչներ՝ սուբյեկտ, ձև, նպատակ:

Իրավակիրառման տեսակները ձևերի ու տիպերի բաժանելուց բացի՝ գրականության մեջ երբեմն հանդիպում են նաև իրավակիրառման նոր տեսակների առաջադրման հիմնավորումներ՝ առանց այդ տեսակը դասակարգման որևէ խմբում ներառելու: Օրինակ, Մ. Ա. Ռասսոլովն իրավունքի իրականացման յուրօրինակ ձև է համարում համապատասխան սուբյեկտների կողմից նորմատիվ ակտերի մեկնաբանումը<sup>7</sup>:

Իրավունքի կիրառումը տեսակների և ձևերի դասակարգելու վերը բերված մոտեցումների քննարկումը ցույց է տալիս, որ այս հիմնահարցը կարիք ունի համակարգային և ամբողջական հետազոտության, ինչը հնարավորություն կտա կազմելու իրավունքի կիրառման տեսակների ամբողջական պատկերը: Այդ պատկերը կազմելու համար շատ կարևոր է չափանիշի ընտրությունը, որով կատարվելու է դասակարգումը, ինչպես նաև առաջադրված դասակարգման համապատասխանությունն ավելի լայն տեսական հայեցակարգերին: Որպես այդպիսի լայն տեսական հայեցակարգ, որ կարող է ուղղորդիչ դառնալ մեր այս հետազոտական խնդրի իրագործման համար, համարվում է «պետական իշխանության իրականացման իրավական ձևերի» կամ «պետության գործառույթների իրականացման ձևերի տեսությունը»: Այն, լինելով ավելի վերացարկված տեսական մոտեցում, քան իրավունքի կիրառման տեսությունը, ուղղորդիչ նշանակություն ունի մեր հետազոտության համար:

Պետական իշխանության կամ գործառույթների իրականացման իրավական ձևը պետության մարմինների միասեռ գործունեությունն է, որի միջոցով պետությունն իրականացնում է իր գործառույթները: Պետական իշխանության իրականացման իրավական ձևն ընթանում է իրավաբանորեն նշանակալի գործողությունների կատարմամբ և հանգեցնում է իրավական հետևանքների: Ավանդաբար ընդունված է պետության գործունեության տեսակ համարել իրավաստեղծագործությունը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավագործադրումը, իրավապահպանությունը: Օրինակ՝ Մ. Ի. Բայտինը պետական իշխանության սուբյեկտների գործունեության մեջ առանձնացնում է դրա իրավական և կազմակերպական ձևերը: Պետաիշխանական գործունեության իրականացման ձևերը նա բաժանում է իրավական և կազմակերպական ձևերի: Դրանք նա բնորոշում է որպես պետական մարմինների արտաքին հատկանիշներով միասեռ գործունեություն, որի միջոցով իրականացվում են նրա գործառույթները: Իրավական ձևերն իրենց հերթին բաժանվում են իրավաստեղծ գործունեության (նորմատիվ ակտերի հրատարակում, իրավական նորմերի սահմանում կամ սանկցիավորում, փոփոխում կամ վերացում), իրավակիրառական գործունեության, որն ուղղված է օրենքների և ենթօրենսդրական ակտերի կատարմանն իրավունքի կիրառման ակտերի հրապարակման ճանապարհով: Իրավակիրառ գործունեությունը Մ. Ի. Բայտինը բաժանում է օպերատիվ-գործադիր գործունեության (ամենօրյա գործադիր-կարգադրիչ գործունեություն իրավունքի կիրառման ակտերի ընդունման ճանապարհով), իրավապահպան գործունեություն (օպերատիվ աշխատանքն ուղղված իրավունքի նորմերը խախտումներից պաշտպանելուն, իրավունքի սուբյեկտներին տրված իրավունքների պաշտպանությունը, նրանց վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանը)<sup>8</sup>:

Սակայն Մ. Ի. Բայտինը պետության գործառույթների իրականացման ձևերը դասակարգում է նաև որպես պետական գործունեության յուրահատուկ տեսակներ (ի տարբերություն ոչ պետական կազմակերպությունների)՝ որպես պետության կառուցակարգի հիմնական օղակների գործունեություն: Ըստ այդ հատկանիշի՝ նա պետության գործառույթների իրականացման հիմնական ձևեր է համարում օրենսդիր գործունեությունը, կառավարչական (վարչական) գործունեությունը, դատական գործունեությունը, վերահսկիչ-հսկիչ գործունեությունը<sup>9</sup>: Վերջինիս տակ նա հասկանում է պետության գործառույթների իրականացում՝ օրինականության նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության բոլոր տարատեսակների գործողության միջոցով:

Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը

և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Այդ գործունեության մեջ ամենապարզ տեսակն իրավագործադրումն է: Իրավագործադրումը՝ որպես իրավունքի կիրառման ձև, իրավապահպանական գործունեությունից (ներառյալ արդարադատությունից) տարբերվում է նրանով, որ կապված չէ ո՛չ իրավական վեճի հետ, ո՛չ էլ իրավախախտման հետ: Այդպիսի իրավակիրառական գործունեությունն ունի իրավասպահովող նշանակություն: Իրավակիրառման իրավապահպան ձևի խնդիրն է պահպանել իրավունքի նորմերը ցանկացած խախտումից, կիրառել պետական հարկադրանքն իրավախախտների նկատմամբ, ապահովել նշանակված պատասխանատվության միջոցների կատարումը:

Արդի ժամանակաշրջանում մեկնաբանողական իրավական գործունեության օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները հնարավորություն են տալիս առաջ քաշելու տեսական դրույթ այն մասին, որ իրավակիրառման տեսակներից մեկն էլ մեկնաբանողական իրավական գործունեությունն է: Խոսքը գնում է պաշտոնական մեկնաբանման նորմատիվ տեսակի մասին: Ի տարբերություն դեպքային (կազուալ) մեկնաբանման՝ նորմատիվ մեկնաբանումն ունի ընդհանուր բնույթ և պարտադիր է տվյալ տեսակի բոլոր գործերի քննության և լուծման ժամանակ, երբ որ կիրառում են մեկնաբանվող նորմը<sup>10</sup>: Պաշտոնական մեկնաբանումն իրականացնում են օրենքով սահմանված պետական մարմինները՝ համապատասխան շահագրգիռ սուբյեկտների դիմումի հիման վրա՝ կոնկրետացնելով սահմանադրության կամ այլ ակտերի դրույթների պարզաբանում-մեկնաբանում՝ առանց իրավագործադրման:

Պաշտոնական մեկնաբանման տեսակներից մեկը լեզու մեկնաբանումն է, երբ օրենքը որևէ պետական մարմնի օժտում է իրավունքով՝ մեկնաբանելու այլ պետական մարմինների ընդունած նորմատիվ ակտերը: «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքը սահմանում է իրավական ակտերի դրույթների պարզաբանման ընթացակարգը (հոդվ. 87): Համաձայն այդ ընթացակարգի իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման՝ իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր

www.lawinstitute.am

դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում<sup>11</sup>:

«Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքով սահմանված իրավական ակտերի դրույթների պարզաբանման ընթացակարգն ըստ էության իրավակիրառում է:

Լեզու պաշտոնական նորմատիվ մեկնաբանման տարատեսակ է սահմանադրական նորմատիվ մեկնաբանումը, որը կարևոր նշանակություն ունի Սահմանադրության իմաստի միատեսակ ըմբռնման և կիրառման համար: Շատ երկրներում սահմանադրական կամ նման գործառույթ իրականացնող դատարաններն ունեն սահմանադրության դրույթների մեկնաբանման լիազորություն: Այդ մեկնաբանման արդյունքները պարտադիր են մնացած սուբյեկտների համար և ունեն նորմատիվ բնույթ ու նշանակություն<sup>12</sup>:

Այս իրավակարգավորումների առանձնահատկությունները հիմք են տալիս պնդելու, որ օրենքով սահմանված պաշտոնական մեկնաբանման այդ մոդելներն իրենց իրավական բնույթով իրավակիրառ գործունեություն են, որովհետև համապատասխանում են դրա բոլոր հատկանիշներին և ավարտվում են անհատական իրավական ակտերի ընդունմամբ: Հետևաբար, *իրավակիրառման տեսակներից մեկը պաշտոնական իրավական մեկնաբանողական գործունեությունն է, որի խնդիրը իրավական կարգավորման գործընթացում իրավապահովող, կոնկրետացնող նշանակությունն է*: Պաշտոնական նորմատիվ մեկնաբանմամբ ապահովվում է իրավական նորմի կարգադրագրերի միօրինակ և ճշգրիտ կենսագործումը, որովհետև այն բացահայտում է մեկնաբանվող նորմի կամ ակտի իմաստը, գործողության ոլորտը, կիրառման պայմանները, իրավունքի սուբյեկտների շրջանակները, իրավունքների իրականացումը և դրանց պայմանները: Իր բնույթով այն կոնկրետացնող նշանակություն ունի՝ ինչպես ենթաօրենսդրական իրավատեղծագործությունը:

Պետական իշխանության կամ պետության գործառույթների իրականացման իրավական ձևերից է վերահսկողական-հսկողական գործունեությունը: Կառավարման տեսությունը կառավար-

ման գործառույթների համակարգում հիմնական տեղ է հատկացնում վերահսկողության գործառույթին՝ միաժամանակ այն դիտարկելով որպես կառավարման վերջնափուլ<sup>13</sup>: Իրավական կարգավորման համակարգում վերահսկողությունը և հսկողությունն իրավական օրինականության ապահովման գլխավոր եղանակներից են:

Վերահսկողությունը տարբերվում է իրական օրինականության ապահովման այլ ձևերից՝ ստուգումից և հսկողությունից<sup>14</sup>: Ի տարբերություն վերահսկողության՝ հսկողության դեպքում հսկողը չի միջամտում հսկվող օբյեկտի գործունեությանը, այլ միայն գնահատում է նրա գործունեությունն իրավական օրինականության դիրքերից: Կատարման ստուգումը վերահսկողությունից տարբերվում է իր նեղ բովանդակությամբ: Այն օբյեկտի փաստական գնահատումն է միայն: Վերահսկողության դեպքում վերահսկվող օբյեկտի գործունեությունը գնահատվում է և՛ իրավաօրինականության դիրքերից, և՛ նպատակահարմարության դիրքերից: Ընդ որում, վերահսկողը միջամտում է վերահսկվողի գործունեությանը և կայացնում նրա կողմից կատարման համար պարտադիր որոշումներ: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ իրավունքի իրականացման բոլոր ձևերի (անմիջական և միջնորդավորված) նկատմամբ իրականացվում է հսկողություն և վերահսկողություն, որոնք հանրային իրավական մարմինների գործունեություն են, այսինքն՝ իրավակիրառում: Իրավակիրառման այս տեսակի խնդիրը իրավունքի իրականացման այլ ձևերի գնահատումն է իրավական օրինականության դիրքերից: Իրավունքի կիրառման ձևով իրավունքի իրականացումը տեղի է ունեցել իրավագործադրմամբ կամ իրավապահպանությամբ: Վերահսկողությունը և հսկողությունը՝ որպես իրավակիրառման տեսակ, զուգորդում կամ հաջորդում են դրանց, կոչված են պարզել հսկվող-վերահսկվող օբյեկտում իրավունքի և դրա նորմերի իրականացման փաստական կացությունն իրավական օրինականության դիրքերից<sup>15</sup>: Այդպիսի գործունեությունն իր հատկանիշներով համապատասխանում է իրավակիրառմանը՝ միակ տարբերությամբ, որ այս դեպքում կատարվում է արդեն տեղի ունեցած իրավակիրառման ստուգում:

Այսպիսով, իրավակիրառ գործունեությունը տեսակների բաժանելու հարցում անհրաժեշտ է հաշվի առնել պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի վերաբերյալ տեսա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան պատկերացումները, որոնք ավելի հարուստ են, քան իրավակիրառումը ձևերի ու տեսակների դասակարգելու վերը բերված մոտեցումները: Մյուս կողմից դասակարգման համար անհրաժեշտ է հիմք դարձնել իրավակիրառման առջև կանգնած խնդիրները, որոնք բխում են իրավական կարգավորման կառուցակարգի ամեն մի փուլի և ենթափուլի առջև դրված խնդիրներից: Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Իրավակիրառման տեսակներն են գործադիր իրավակիրառումը (իրավագործադրումը), իրավապահպանությունը (ներառյալ՝ դատա-

կան), վերահսկողական-հսկողական իրավակիրառական գործունեությունը, մեկնաբանողական իրավակիրառական գործունեությունը: Իրավագործադրումը՝ որպես իրավունքի կիրառման ձև, ունի իրավասպահովող նշանակություն: Իրավակիրառման իրավապահպան ձևը (ներառյալ՝ արդարադատությունը) կապված է իրավական վեճի կամ իրավախախտման հետ: Պաշտոնական նորմատիվ մեկնաբանումն իրականացնում են օրենքով սահմանված պետական մարմինները՝ համապատասխան շահագրգիռ սուբյեկտների դիմումի հիման վրա՝ կոնկրետացնելով իրավական ակտերի դրույթները, պարզաբանելով-մեկնաբանելով դրանք առանց իրավագործադրման:

<sup>1</sup> Տե՛ս Головистикова А.Н., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права.– М., Изд-во ЭКСМО, 2005, С. 552-553. Իրավակիրառական գործունեությունը երկու ձևերի բաժանման կողմնակիցներ են նաև այլ հեղինակներ, որոնք գրեթե նույն կերպ են բնութագրում դրանց բովանդակությունը (տե՛ս Мухаев Р.Т. Теория государства и права, М., “Издательство ПРИОР” 2001, С. 391; Марченко М.Н. Проблемы теории государства и права.– М., 2005, С. 686; Сорокина Ю.В. Государство и право: Философские проблемы. Курс лекций, М., ОАО “Издательский дом городец”, 2004, С. 169; Комаров С.А. Общая теория государства и права (энциклопедический курс):- М., Юрайт, 1997, С. 306; Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, ԵՊՀ, Եր., հեղինակային հրատարակություն, 2011, էջ 294):

<sup>2</sup> Տե՛ս Протасов В.Н. Теория государства и права. Проблемы теории права и государства, М., 2001, С. 206.

<sup>3</sup> Տե՛ս Скакун О.Ф. Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, С. 649.

<sup>4</sup> Տե՛ս Лазарев В.В., Липень С.В., Теория государства и права: М., Спарк, 2004, С. 365-366; Проблемы теории государства и права / Под ред. Сырых В.М. М., 2008, С. 314-315.

<sup>5</sup> Տե՛ս Проблемы теории государства и права / Под ред. Сырых В.М. М., 2008, С. 315.

<sup>6</sup> Տե՛ս Черданцев А.Ф. Теория государства и права. М., Юрайт-М, 2001, С. 259; Проблемы теории государства и права / Под ред. Сырых В.М. М., 2008, С. 315.

<sup>7</sup> Տե՛ս Рассолов М.М. Актуальные проблемы теории государства и права: М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2011, С. 269.

<sup>8</sup> Տե՛ս Теория государства и права. Курс лекций / Под ред. Матузова Н.И. и Малко А.Б. С. 74-77.

<sup>9</sup> Տե՛ս Общая теория государства и права: Академический курс в трех томах / Отв. ред. Марченко М.Н. М., НОРМА, 2007, С. 400.

<sup>10</sup> Իրավական նորմի մեկնաբանում-պարզաբանումը նորմի իրական բովանդակության բացահայտմանն ուղղված ցուցումներն ու խորհրդատվություններն են: Կախված իրավական նորմը պարզաբանող սուբյեկտներից, ինչպես նաև այն իրավական հետևանքներից, որն ունի իրավական նորմի պարզաբանումը, մեկնաբանումը կարող է լինել պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնական մեկնաբանումն իրավունքի նորմի այնպիսի պարզաբանումն է, որը կատարում են օրենքով լիազորված պետական մարմինները և պաշտոնատար անձինք: Նման մեկնաբանումն ունի իրավական հետևանքներ (այն պարտադիր է բոլորի համար, ովքեր կիրառում են տվյալ նորմը): Պաշտոնական մեկնաբանումն ըստ ծավալի բաժանվում է նորմատիվի և կազուալի (տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-2, Դասախոսություններ, ԵՊՀ, Եր., հեղինակային հրատարակություն, 2011, էջ 321-322):

<sup>11</sup> Իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ՝ ա) ՀՀ կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը՝ ընդ որում մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին, ք) ՀՀ կենտրոնական բանկը՝ իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ, գ) կարգավորող հանձնաժողովները՝ իրենց կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ, դ) ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր կողմից կիրառվող

կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ, ե) համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու և իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ:

<sup>12</sup> Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 125-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՌԴ սահմանադրական դատարանը տալիս է Սահմանադրության պարտադիր մեկնաբանություն: Ցավոք, ՀՀ սահմանադրական դատարանը չունի ՀՀ Սահմանադրության մեկնաբանման լիազորությունը:

<sup>13</sup> Ցանկացած տեսակի հասարակական կառավարում և կարգավորում դիտարկվում է որպես որոշակի հասարակական նպատակներ ու խնդիրներ ունեցող գործունեություն, որը բաժանվում է ընդհանուր գործառույթների, այն է՝ կանխորոշումը, պլանավորումը (ծրագրավորումը), կազմակերպումը, կարգավորումը, ընդհանուր ղեկավարումը, օպերատիվ կարգադրությունը, կորդինացումը, վերահսկողությունը (տե՛ս Советское административное право. Под. ред. Василенкова П.Т. М., 1990, С. 6): Ռ. Ֆալմերն առանձնացնում է կառավարման հետևյալ ընդհանուր գործառույթները՝ պլանավորումը, կազմակերպումը, կատարումը, վերահսկողությունը (տե՛ս Фалмер Роберт М., Энциклопедия современного управления. Пер. с англ., М., 1992, т. 1-5): Մեկ այլ հեղինակի կարծիքով՝ կառավարման գործառույթներն են պլանավորումը, կազմակերպումը, շարժառիթավորումը, վերահսկողությունը (տե՛ս Киллен К. Вопросы управления, пер. с англ., М., 1981, С. 31-108): Գ. Վ. Ատամանյուկը, ըստ բնույթի և գործողությունների հերթականության, կառավարման (ներառյալ պետական) գործառույթներ է համարում կազմակերպումը, պլանավորումը, կարգավորումը, կադրային ապահովումը, վերահսկողությունը (տե՛ս Атаманчук Г.В. Теория государственного управления, курс лекций., М., 1997, С. 125): Այսպիսով, կառավարման գրեթե բոլոր տեսաբանները կառավարման գործընթացի փուլերի համակարգում առանձնացնում են վերահսկողությունը կամ կատարման վերահսկողությունը:

<sup>14</sup> Տե՛ս Советское административное право. Под. ред. Василенкова П.Т. М., 1990, С. 241.

<sup>15</sup> Վերահսկողությունը զանազան չափանիշներով դասակարգվում է ձևերի: Այն կարող է լինել ներքին վերահսկողություն (ներհամակարգային ինքնավերահսկողություն) և արտաքին վերահսկողություն (որևէ համակարգի կամ ենթահամակարգի կողմից իրենից դուրս գտնվող օբյեկտի գործունեության վերահսկում), մշտական և ժամանակավոր, ընդհանուր գերատեսչական և արտագերատեսչական, նախնական, ընթացիկ և հետագա:

**РЕЗЮМЕ**

***Проблемы классификации типов и форм правоприменения, как особой формы реализации права***

Особой формой реализации права является правоприменение, представляющее собой комплексную властную деятельность, которая сочетает в себе и соблюдение, и использование, и исполнение правовых предписаний.

Применение права - это государственно-властная творческая деятельность компетентных органов, лиц и уполномоченных общественных организаций по реализации правовых норм относительно конкретных жизненных случаев путем вынесения индивидуально- конкретных правовых предписаний.

Правоприменение обусловлено определенными обстоятельствами. Необходимость в нем возникает, когда совершено правонарушение и необходимо установить для правонарушителя соответствующую меру наказания, либо, когда предусмотренные юридическими нормами права и обязанности не могут возникнуть у конкретных лиц без государственно-властной деятельности компетентных органов. То же самое относится к возникновению спора о праве и необходимости защитить чье-либо субъективное право. Наконец, необходимость осуществления предусмотренного законом контроля за правильностью приобретения прав и возложения обязанностей.

**SUMMARY**

***Classification problems of types and forms of law enforcement***

The types of law enforcement are executive law enforcement (law implementation), legislation(including forensic legislation), checking-controlling and interpreting law enforcement activities. Law enforcement, as a form application of rights, has got a law-reliable meaning. The form of law enforcement (including justice) is connected with legal argument or law violation. The official normative interpretation is carried out by the public legal authorities based on the application of appropriate concerned parties by specifying on the Constitution or other act theses and interpreting them without law enforcement.